ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՏԱՐՐԵՐԸ

ՔՈՉԱՐՅԱՆ Տ. Տ.

Յուրաքանչյուր երկրի անկախության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության, ինչպես նաև մարդու իրավունքների, ազատությունների, հասարակական կարևոր այլ ըմբռնումների (հարաբերությունների) պահպանման համար պետությունն իր առջև դնում է որոշակի նպատակներ՝ բնականաբար, նկատի ունենալով ինչպես իր, այնպես էլ հասարակության շահերը: Հին աշխարհում անվտանգության ըմբռնումը դուրս չէր գալիս ամենօրյա պատկերացումների սահմաններից և մեկնաբանվում էր որպես մարդու համար վտանգի կամ չարիքի բացակայություն: Արիստոտելը հասարակության կառավարման մեթոդների վերաբերյալ իր գաղափարների հիմքում օգտագործում էր քաղաքացիների անվտանգության չափանիշը[1]: Բնականաբար, անվտանգության ինստիտուտը որոշակի զարգացում, գենեզիս է ապրել, սակայն հիմքում անվտանգության երևույթի ընկալումը մնում է նույնը, այն է՝ ժողովրդի ինքնապաշտպանություն և սպառնալիքի բացակայություն:

XX դ. վերջին և XXI դ. առաջին տասնամյակում միջազգային հանրությունը լուրջ ուշադրություն է դարձնում աշխարհում անվտանգության ապահովման հիմնահարցերին: Հիմնականում դա պայմանավորված էր համաշխարհային մասշտաբի տեղի ունեցող մի շարք սոցիալ-քաղաքական խաթարումներով, նոր տեսակի սպառազինությունների (ներառյալ՝ ատոմային) առկայությամբ, ինչպես նաև բնապահպանական աղետներով, որոնք իրական սպառնալիք են ինչպես ողջ մարդկության, այնպես էլ ամեն մի կոնկրետ երկրի ու անհատի համար[2]:

Ռուս հայտնի տեսաբան Ն. Կորկունովը դեռևս մեկ դար առաջ նշում էր, որ, փորձելով ապահովել նպատակների և շահերի իրականացումը, պետությունները միմյանց միջև թե՛ ռազմական, թե՛ խաղաղ պայքար են մղում[3]: Պետության տարածքային սահմաններից դուրս առկա շահերի վերաբերյալ նախորդ դարի գերմանացի հայտնի իրավագետ Լորենց ֆոն Շտեյնը նշում էր, որ իրեն գնահատող երկիրը միշտ էլ ընդունում է պատերազմի իրավունքը, որը յուրաքանչյուր քաղաքակիրթ պետության ինքնավար իրավունքն է[4]:

---

[1] **Лесков М. А.** *Гомеостатические процессы и теория безопасности (Безопасность, вып. 4, М., 1994, с. 66).*

[2] *Конституционно-правовой статус Совета Безопасности Российской Федерации. Учебное пособие, под общей редакцией докт. юрид. наук Н. П. Патрушева, М., 2009, с. 7.*

[3] **Коркунов Н. М.** *Русское государственное право, т. 1, СПб., 1892, с. 20.*

[4] **Штейн фон Л.** *Учение о военном быте как часть науки о государстве, СПб., 1875, с. 7..*

Այս գաղափարները որոշ առումով ընդունելի են համարվում նաև ներկայումս: Դրա վառ ապացույցն են XX դ. վերջին տարիների իրադարձությունները, երբ պատերազմներ էին մղվում մի կողմից՝ պետության տարածքային ամբողջականությունը պահպանելու, մյուս կողմից՝ տարածքներ զավթելու, ինչպես նաև պետության ներքին կյանքին խիստ անհրաժեշտ ռեսուրսների (նյութականից մինչև մտավոր) համար: Կայուն և մշտական ռեսուրսներ ունենալու համար անհրաժեշտ է վերահսկողություն սահմանել դրանց աղբյուրների հոսքերի հանդեպ. ահա սա է զարգացած պետությունների մեծամասնության այսօրվա օբյեկտիվ շահը: Նշվածից բացի, պետությունը կարող է նաև անմիջական հարկադրանքի դիմել իր բնակչության հետ փոխհարաբերություններում, որը հնարավոր է միայն ուժային կառույցների առկայության դեպքում: Պետության ինքնապահպանման վերոհիշյալ երկու խումբ շահերի հիմքը կազմում են տնտեսական, ազգային, մշակութային, կրոնական և այլ շահերը[5]:

Պետության՝ ազգային շահերով պայմանավորված արժեքային նպատակներից է ազգային անվտանգության ապահովված միջավայրը, երբ բացակայում են կամ վերացված են իրական արտաքին և ներքին սպառնալիքներն ազգային արժեքների, շահերի և ազգաբնակչության բնականոն կենսագործունեության հանդեպ, երբ ապահովվում է պետության, հասարակության և անհատի կենսականորեն անհրաժեշտ շահերի իրականացումը:

Ներկայիս սոցիալական կյանքը տարբերվում է նախկինում անհայտ շարժունակությամբ և բնութագրվում է նոր առաջնահերթություններով, որոնց շարքում առանձնանում է, իհարկե, մարդը (անձը), վերջինիս շահերի համադրումը պետության ու հասարակության շահերին: Յուրաքանչյուր քաղաքակիրթ երկրում անձը դիտարկվում է ամեն մի հետազոտության ու միջոցառման կենտրոնում՝ որպես հիմնական սոցիալական արժեք: Քաղաքական, իրավական և սոցիալական հետազոտությունների համատեքստում աստիճանաբար առավել ուշադրություն է դարձվում այն հարցերին, որոնք առնչվում են և ուղղակիորեն կապված են անձի ու հասարակության անվտանգության արագ զարգացող քաղաքական-իրավական ռազմավարությանը: Այս պայմաններում անվտանգության ապահովման հիմնախնդիրների արդյունավետ լուծումը անհնար է դառնում առանց հատուկ մասնագիտացված մոտեցումների ու կառուցակարգերի կիրառման[6]:

Ազգային անվտանգությունը համարվում է խաղաղության, ինչպես նաև յուրաքանչյուր պետության ու հասարակության գոյության և կայուն զարգացման հիմնական, ամենակարևոր գործոնը: «Ազգային անվտանգություն»

---

[5] **Возженников А. В.** *Национальная безопасность: теория, политика, стратегия, М., 2000, с. 55.*

[6] **Фомин С. А.** *Обеспечение национальной безопасности. Курс лекций, М., 2007, с. 9.*

հասկացությունն իր լայն առումով տարածում է գտել այնպիսի երկրներում, որտեղ անվերապահորեն գործում է «Մեկ ազգ, մեկ պետություն» սկզբունքը, այն է՝ քաղաքացիական հասարակության ձևը հենց պետությունն է՝ այդ նույն հասարակության անվտանգության ապահովման կառուցակարգերով հանդերձ: Ըստ անվտանգության նեղ իմաստային սահմանման՝ ազգային անվտանգությունը ներառում է տարածքի պաշտպանություն, արտաքին քաղաքականություն, հետախուզություն և հակահետախուզություն: Ակնհայտ է, որ ազգային անվտանգության նեղ սահմանումը կենտրոնացած է անվտանգության ապահովման համակարգի և արտաքին աշխարհի հարաբերությունների ոլորտում: Որոշ հեղինակներ արդարացիորեն գտնում են, որ բարդ ու զարգացող աշխարհում ազգային անվտանգության երևույթն անհրաժեշտ է դիտարկել լայն տեսանկյունից, քանի որ անվտանգության համալիր բնութագիրը համապատասխանում է քաղաքական համակարգերի գնահատման արդի նկարագրերին[7]:

Որոշ մասնագետներ ազգային անվտանգության միջավայրը դիտարկում են մի շարք օբյեկտիվ գործընթացներով պայմանավորված բարդ համակարգ՝ փոխկապակցված հետևյալ երեք տարրերով. ազգային շահեր, ազգային անվտանգության սպառնալիքներ և դրանց դեմ ուղղված պաշտպանական կարողություններ[8]: Վերջիններիս մակարդակները պայմանավորում են նաև ազգային անվտանգության ամբողջական համակարգի մակարդակը, որում անթույլատրելի է անվտանգության մի տարրի բարձր ապահովվածությունը՝ ի հաշիվ մեկ այլ բաղադրիչի:

«Ազգային անվտանգություն» հասկացությունը՝ որպես քաղաքական-իրավական ու սոցիալ-տնտեսական ինստիտուտ, օբյեկտիվորեն կրում է կոնկրետ պատմական զարգացումների ազդեցությունը և սերտորեն կապված է «բնություն–մարդ–հասարակություն» համակարգում տեղի ունեցող փոխներգործության բոլոր ձևերի, ուղղությունների հետ: «Անվտանգություն» հասկացությունը բացարձակ չէ, այլ ընդամենը հարաբերական ու իմաստային նշանակություն է ձեռք բերում միայն կոնկրետ օբյեկտների կամ մարդկային գործունեության և շրջակա միջավայրի ոլորտների հետ կապի մեջ:

Ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում ազգային անվտանգության (իր ենթատեսակներով հանդերձ) ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևակերպել այն եզրահանգումը, որ ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ քաղաքական դերակատարների գործունեությունը բարդ, բազմամակարդակ, բաց և դինամիկ բաղադրիչների համախումբ է: Այդ համակարգի ուսումնասիրության առանձնահատկությունն այն է, որ անհրաժեշտ գիտելիքները պետք է լինեն առավելագույնս հավաստի, գիտական վերլուծության միջոցները, ուսումնասիրության մեթոդներն ու ընթացակարգե-

---

[7] **Շահգելդյան Մ.,** *Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Ե., 2003, էջ 8-9:*

[8] **Мирошниченко В. М.** *Организация управления и обеспечение национальной безопасности Российской Федерации., М., 2002, с. 6.*

ը պետք է ընտրվեն ամենայն բծախնդրությամբ՝ համապատասխանելով արդի բոլոր մարտահրավերներին:

Որպես սոցիալ-քաղաքական երևույթ՝ ազգային անվտանգության գլխավոր բաղադրիչներն են անձի անվտանգությունը, հասարակության անվտանգությունը և պետության անվտանգությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են երկրի պաշտպանությունը, հասարակական կյանքը, միջազգային հարաբերությունները, բնապահպանությունը, տնտեսությունը, տեղեկատվությունը և այլն: «Ազգային անվտանգություն» հասկացությունը, բացի նշված բաղադրիչներից, ընդգրկում է նաև կենսագործունեության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են, օրինակ, անձի կյանքի, առողջության, իրավունքների ու ազատությունների, սեփականության, հասարակության և պետության անվտանգության պաշտպանությունը հանցագործ ոտնձգություններից, բնակչության միջուկային և ռադիացիոն անվտանգությունը, շրջակա բնական միջավայրի վրա մարդածին ներգործության, ինչպես նաև տարերային աղետների հետևանքներից անձի, հասարակության և պետության պաշտպանվածության վիճակը, պետության կողմից պահպանվող տեղեկությունների տարածումից պաշտպանվածությունը և այլն[9]:

Որպես այդպիսին՝ ազգային անվտանգությունը ներառում է ներքին և արտաքին սպառնալիքներից ու վտանգներից անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության այն վիճակը (նրանց կենսագործունեության բոլոր ոլորտներում), որն ապահովում է նրանց կայուն զարգացումը: Նման բնութագրումը առավել լիովին է արտացոլում նրա սոցիալ-քաղաքական բնույթը, բնության ու հասարակության ազգային անվտանգության և տարածաշրջանային ու համապարփակ անվտանգության փոխադարձ կապը, հաշվի է առնում անձնական, հասարակական և պետական անվտանգության դիալեկտիկական միասնությունը, զարգացող քաղաքական ու գլոբալացման մյուս գործընթացները:

Ազգային անվտանգությունը, որպես սոցիալ-քաղաքական երեվույթ, ամփոփում է իրավունքով ամրագրված բազում արժեքները, դրանց ամբողջությունը: Ազգային անվտանգության համակարգում դիտարկվում են առաջին հերթին մարդու կողմից ընկալվող սոցիալապես նշանակալի արժեքները: Սոցիալական համակարգն ինքնին պայմանավորված է արժեքների աստիճանակարգությամբ և գործառույթով:

Ազգային անվտանգության տեսության պատմական զարգացումը պահանջեց տեղի ունեցող գործընթացները դիտարկել նորովի այն տեսանկյունից, թե դրանք ինչ արժեքային-գաղափարական և քաղաքական բովանդակություն ունեն ազգային անվտանգության համար: Պահանջվեց բարեփոխվող պետությունների քաղաքական, սոցիալական, տնտեսական, բնապահպանական և մյուս երևույթները դիտարկել արժեքային նոր

---

[9] *Տե՛ս նաև* **Մարկոսյան Ա.,** *Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Ե., 2005:*

մեկնաբանմամբ, այսինքն՝ բացահայտել մարդկանց արժեքային պատկերացումները, որոնք պայմանավորում են հասարակական գիտակցության համակարգերը: Առանց այդպիսի աշխատանքի անկարելի է ազգային շահերը ձևակերպել որպես անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր արժեքների ամբողջություն:

Անվտանգության սոցիալական արժեքները բովանդակության տեսակետից կարելի է բաժանել հետևյալ խմբերի. 1) գլոբալ (հոգևոր և քաղաքական մշակույթի հիմնարար երևույթներ, պայմաններ ուրիշ արժեքների գոյության համար), 2) ազգային (առանձին վերցրած մեկ երկրում անձի, հասարակության և պետության նյութական ու հոգևոր արժեքների ամբողջություն), 3) նյութական (պայմանավորված արտադրության ոլորտում մարդկանց գործունեությամբ), 4) հոգևոր (հոգևոր ոլոտում մարդկային գործունեությամբ), 5) քաղաքական (քաղաքական ոլորտում), 6) էթնիկական արժեքներ (առանձին էթնոսի նյութական ու հոգևոր արժեքների ամբողջությունը) և այլն[10]:

Ազգային արժեքների բնույթը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է դասակարգել դրանք, որը թույլ կտա բացահայտել ազգային արժեքների իրական էությունը և անվտանգության տարբեր ոլորտներում դրանց ազդեցությունը անձի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի համակարգի վրա: Արժեքներն ըստ գոյության եղանակի կարող են դասակարգվել որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ, բնական ու սոցիալական, հավերժական և ժամանակավոր, անհատական ու խմբային, հասարակական-քաղաքական և պետական: Դասակարգումը կարող է շարունակվել նաև ըստ այլ հիմքերի:

Փաստորեն, ազգային արժեքները նույն սոցիալական արժեքներն են, բայց դրանք սահմանափակվում են այդ արժեքները կրողների՝ սուբյեկտների շրջանակով: Դա անձի, հասարակության և պետության հոգևոր ու նյութական արժեքների ամբողջությունն է: Ազգային արժեքները՝ որպես սոցիալական արժեքների տարր, երկակի բնույթ ունեն: Ազգային հոգևոր արժեքները ծառայում են որպես տարբեր սոցիալական խմբերի շահերի համախմբման միջոց, ձևավորում են կոնկրետ հասարակությունում անձի սոցիալականացման ընդհանուր ուղղվածությունը: Ազգային արժեքները, ըստ բովանդակության, անձի, հասարակության և պետության սոցիալական արժեքների ամբողջությունն են, որոնց կորուստը հանգեցնում է ազգի վերացմանը՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտի:

Համաձայն ազատական ուսմունքների՝ ազգային անվտանգության հիմքերի հիմքը առանձին քաղաքացիների նշանակալի արժեքներն ու շահերն են, որոնցից բխում են հասարակության և պետության շահերը: Պետությունը դրանցում դիտարկվում է որպես քաղաքացիների,

---

[10] **Буркин А. И., Возженников А. В., Синеок Н. В.** *Национальная безопасность России в контексте современных политических процессов, изд. второе, дополненное (под общ. ред. А. В. Возженникова, М., 2008, с. 44).*

հասարակության և պետության զարգացման համար լավագույն պայմաններն ապահովող միջոց, իսկ այդ պայմանները պայմանավորված են գործող օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդակների ողջ սպեկտրով:

Ազգային անվտանգության նպատակային հիմքը հասարակական շահն է՝ որոշակիորեն արտահայտելով նաև քաղաքականության և քաղաքական գործունեության էությունը: Ա. Վոզժեննիկովը նկատում է. «Երբ ձեռք է բերված պահանջների բավարարման որոշակի մի մակարդակ, ապա առաջին պլան են մղվում շահերը. դրանք ոմանց համար սպառման ձևավորված մակարդակին հասնելու օրինական պահանջներ են, ուրիշների համար՝ կյանքի պայմանների որակական փոփոխության ձգտում: Շահերի մեջ կա այն պայմանները ժխտելու, չընդունելու դիրքորոշում, որոնք ընկալվում են որպես ոչ արժանավայել, ոչ համարժեք... Շահերն անմիջականորեն արտացոլում են հասարակության մեջ ձևավորված անհատականության հարաբերությունները, նրանց մեջ միշտ առկա է մարդու հետ, մեկ սոցիալական խմբին մյուսի հետ համեմատելու տարրը: Դրանում է այն իրողության, այն իրական հզորության հիմքը, որը կա շահերի մեջ»[11]:

Քաղաքական առումով շահը այս կամ այն սոցիալական հանրության հատկանիշն է, որն ամենաէական ձևով ներգործում է այդ սոցիալական հանրության սոցիալ-քաղաքական վարքագծի վրա, կանխորոշում նրա՝ սոցիալապես նշանակալի կարևորագույն գործողությունները: Որոշ մասնագետներ ազգային շահեր ասելով հասկանում են անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի ամբողջությունը, որոնք արտահայտում են ազգի՝ պահպանության և կայուն զարգացման ձգտումը: Ազգային շահերը քաղաքական գործողությունների և իրագործումների պատճառների պատճառն են՝ արտացոլվելով տնտեսական, քաղաքական և ռազմական հայեցակարգերի, տարբեր բնույթի փաստաթղթերի, ծրագրերի ձևով:

Որպես կատարելություն՝ այն վերածվում է նպատակի, որը իր ժամանակին ձևակերպել է Իտալիայի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս Մաձձինին (1805-1872 թթ.). «Յուրաքանչյուր ազգի համար միայն մեկ պետություն»[12]: Սակայն իրականում «ազգային պետությունը» վերացական իմաստով «իդեալական արժեք» է դառնում և, ինչպես երևում է, երբեք գոյություն չի ունեցել իր կատարյալ ձևով: Այդուհանդերձ, պետության և քաղաքացիների անվտանգության ապահովման տեսակներից ժամանակակից պայմաններում քաղաքական կազմակերպության իդեալական ձևը կարող է լինել հենց ազգային պետությունը՝ որպես էթնիկական և տարածքային հանրությունների իշխանության ամբողջություն:

---

[11] **Возженников А. В., Рудаков А. В., Стрельяненко В. В.** *Проблемы обеспечения безопасности личности (политико-правовой аспект), М., 2007, с. 107-110.*

[12] **Буркин А. И., Возженников А.. В., Синеок Н. В.** *նշվ. աշխ., էջ 47:*

«Սպառնալիք» հասկացությունը ազգային անվտանգության տեսության մեջ կարևոր նշանակություն ունի: Սպառնալիքները պետք է ճիշտ ժամանակին հայտնաբերվեն, և ազգային անվտանգության ապահովման համակարգը պետք է անմիջապես արձագանքի դրանց, ինչն առաջնահերթ կարևորություն ունի անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանության գործում: Սպառնալիքների կանխման և տեղայնացման գործունեության հիմնական ուղղությունները, առկա սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ձևերը, եղանակները և միջոցները պայմանավորված են այդ սպառնալիքների բնույթով և մակարդակով:

Սակայն, չնայած տվյալ հասկացության տեսական և գործնական նշանակությանը, մասնագիտական գրականության մեջ դեռևս միասնական մոտեցում չի մշակված այդ հասկացության նկատմամբ: «Սպառնալիք» հասկացության ժամանակակից սահմանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրում այս կամ այն կերպ արտացոլվում է վնաս պատճառելու գործընթացը, իսկ այդ վնասը բնութագրվում է որպես հասցված կորուստ, ոտնձգություն, խախտում, բացասական ներգործություն: Որոշ հեղինակներ «սպառնալիքը» հաճախ նույնացնում են «վտանգի» հետ[13]: Բայց սպառնալիքը անվտանգության օբյեկտի շահերին վնաս պատճառելու իր հնարավորություններով զգալիորեն ավելի լայն է, քան վտանգը:

«Սպառնալիք» հասկացությունը ներառում է այն մտադրությունների և հնարավորությունների ամբողջությունը, որոնք կարող են վնաս պատճառել անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերին: Վտանգը անվտանգության օբյեկտների կենսականորեն կարևոր շահերի վրա իր ներգործության շառավղով միշտ ավելի լայն է: Այն առավել հաճախ հետևանք է բնական կամ երկարատև սոցիալ-քաղաքական գործընթացների: Մարդը միշտ սպառնալիքի վիճակում է, բայց նա ոչ միշտ է շրջապատված վտանգներով: Դա արտացոլում է մարդու օրգանական կապը բնության ու սոցիալական միջավայրի հետ: Սոցիալական գործոնը վճռական նշանակություն ունի սպառնալիքների ծագման և չեզոքացման մեխանիզմում: Իսկ բանական գործոնը վճռական նշանակություն ունի սպառնալիքների ծագման մեջ, սակայն իր հիմքով սոցիալական բնույթ կարող է ունենալ (կամ էլ ածանցյալ լինել տարբեր սոցիալական աղբյուրներից):

Ազգային անվտանգության սոցիալական համակարգը բարդ կառուցվածք ունի: Այն փոխկապված ենթահամակարգերի մեկ ամբողջություն է, և ինքն էլ իր հերթին մտնում է ավելի բարձր կարգի համակարգերի մեջ: Ելնելով դրանից՝ հարկ է տարբերակել արտաքին ու ներքին անվտանգությունը: Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգությունն իրենց հերթին ունեն «ուղղահայաց տեղաբաշխման» ենթահամակարգեր:

---

[13] **Возженников А.. В., Рудаков А.. В., Стрельяенко В. В.** *նշվ. աշխ., էջ 115:*

Արտաքին անվտանգությունը ենթադրում է կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը պետության սահմաններից դուրս եկող սպառնալիքներից ու վտանգներից: Արտաքին անվտանգությունը կարող է խախտվել ինչպես ռազմական ճանապարհով, այսինքն՝ զենքի ուժով, այնպես էլ այլ եղանակներով, օրինակ՝ հումքի, արտադրանքի, տարադրամի, գեղարվեստական և այլ արժեքների ներմուծմամբ ու արտահանմամբ և այլն: Ներքին անվտանգությունը ենթադրում է անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը երկրի կողմից կառավարվող կամ բուն նրա տարածքում գտնվող կազմակերպություններից, գործընթացներից, անձերից և օբյեկտներից եկող սպառնալիքներից ու վտանգներից:

Ազգային շահերի դեմ ուղղված արտաքին և ներքին սպառնալիքների դրսևորման ոլորտները բնութագրելու համար հեղինակները օգտագործում են անվտանգության տեսակների հասկացությունները, ինչպիսիք են միջազգային, քաղաքական, տնտեսական, ռազմական (պաշտպանական), տեղեկատվական և այլ ծալքերը, որոնք արդեն մշակված են քաղաքագիտության մեջ: Հեղինակները անվտանգության հիմնական տեսակների բովանդակությունը քննարկում են՝ ելնելով հասարակության կենսագործունեության ոլորտների վիճակի վերլուծությունից:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխարհում մեծ մասամբ տեղի են ունենում ազգային անվտանգության վերաբերյալ գոյություն ունեցող հայացքների փոփոխություններ երեք հարթություններում. ազգային անվտանգության հասկացության փիլիսոփայական-աշխարհայացքային մեկնաբանության մեջ, ազգային անվտանգության ապահովման նկատմամբ հայեցակարգային մոտեցումներում և ազգային անվտանգության ապահովման քաղաքականության իրականացման ձևերի, այն է՝ կյանքի տարբեր ոլորտներում անձի, հասարակության և պետության անվտանգության կենսա-կանորեն կարևոր շահերի պաշտպանության միասնական խնդրի լուծման գործում:

Այսպիսով, ազգային անվտանգությունը բազմաբնույթ և ընդգրկուն հասկացություն է: Ըստ կենսագործունեության տարբեր ոլորտներում ազգային շահերի դրսևորումների՝ ազգային անվտանգությունը ներառում է սոցիալ-քաղաքական, ինչպես նաև տնտեսական, ռազմական, տեղեկատվական և բնապահպանական բաղադրամասերը: Ազգային անվտանգության ապահովման ժամանակակից տեսության և պրակտիկայի մշակումը պայմանավորված է ոչ միայն ազգային անվտանգության երևույթի մասին գոյություն ունեցող փիլիսոփայական աշխարհայացքային պատկերացումների փոփոխություններով, այլև անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովման պրակտիկ քաղաքականության նրկատմամբ եղած մոտեցումների փոփոխություններով: Ժամանակակից աշխարհում անձը, նրա իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են որպես հասարակության և պետության բարձրագույն արժեքներ, և մերժվում են

ամբողջատիրական բնույթի մոտեցումները ազգային անվտանգության ապահովման նկատմամբ:

ЦЕННОСТНАЯ ЗНАЧИМОСТЬ И СТРУКТУРНЫЕ ЭЛЕМЕНТЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

КОЧАРЯН Т. Т.

Резюме

В конце XX – первом десятилетии XXI вв. международное сообщество стало уделять серьезное внимание вопросам обеспечения безопасности во всем мире. Безопасность является основным, наиважнейшим фактором мира, существования и стабильного развития любого государства и общества. Обеспечение национальной безопасности – это защищенность жизненно важных интересов личности, общества и государства, а также защита национальных ценностей. Система безопасности включает в себя широкий спектр различных внешних и внутренних элементов (политические, военные, экономические, экологические, социальные и т. д.).

THE IMPORTANCE OF VALUES AND STRUCTURAL ELEMENTS OF THE NATIONAL SECURITY

T. KOCHARYAN

Abstract

In the 20th century’s last and the 21st century's first decade, the international community gives serious attention to the security issues in the world. The security is the most important, main factor for peace, for the existence, sustainable development of each state and society. The support system of national security is the protection of the vital interests of the individual, society, and state. Besides, it is the support of national values. The security system includes a wide set of diverse external and internal elements (political, military, economic, environmental, social, etc.).